



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՀԱՐԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

« 22 » 01 2014 թ

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ

ԲՓ 02

Տրված է՝

«Հայնախագիծ» ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝

Դիլիջան քաղաքի ՀՀ կենտրոնական բանկի
հանգստյան տան կաթսայատան նախագծային
փաստաթղթերի վերաբերյալ
«Տավուշի մարզ»

Տնօրեն՝



Գևորգյան

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 02

«22» 01 2014թ.

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի ՀՀ կենտրոնական բանկի հանգստյան տան կաթսայատան նախագծային փաստաթղթերի վերաբերյալ

Նախագծող՝

«Հայնախագիծ» ԲԲԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում



Կաթսայատունը նախատեսված է Դիլիջան քաղաքի ՀՀ կենտրոնական բանկի հանգստյան տան ջերմամատակարարումն իրականացնելու համար: Ելնելով ջերմային ծախսերից՝ նախագծում նախատեսված են ավտոմատացված ջրային երկու կաթսաներ 350կՎտ մոմինալ ջերմարտադրողականությամբ: Կաթսայատունը ձմռան ամիսներին ապահովում է բժշկական կենտրոնի ջեռուցումը և տաք ջրամատակարարումն, իսկ ամռան ամիսներին՝ միայն տաք ջրամատակարարումը: Կաթսայատան շահագործումն իրականացվում է բնական գազով 8000կկալ/մ³ այրման ջերմությամբ: Բնական գազի առավելագույն ծախսը կազմում է 328տ/տարի:

Վառելիքի այրման գործընթացում առաջացած ծխագազերը հեռացվում են d=325մմ տրամագծով H=7մ բարձրությամբ ծխնելույզից: Ելնելով ջերմային ծախսերից նախագծում նախատեսված են ջրային երկու կաթսաներ յուրաքանչյուրը 350կՎտ ջերմարտադրողականությամբ: Կաթսաները գազի համար համարված են ավտոմատացված համակցված այրիչներով: Տաք ջուր ստանալու համար կաթսայատանը նախատեսված է ջրածնային թերթավոր տաքացուցիչ:

Կաթսայատանը տեղակայված են նաև հիդրավլիկական սլաքներ, ջրատաքացուցիչներ, քաղանթային ընդարձակիչ անոթներ, կոլեկտորներ, պոմպեր և անջատիչներ: Կաթսայատան ջրամատակարարման աղբյուր է հանդիսանում Դիլիջան քաղաքի քաղաքային ջրամատակարարման ցանցը:

Ընտրված կաթսաներն ունեն փոքր աերողինամիկական դիմադրություն, որի շնորհիվ ծխագազերի արտանետումը ընտրված է բնական: Վառելիքի այրման համար օդաքանակը վերցվում է անմիջապես կաթսայատան սրահից, իսկ կաթսայատուն օդի մուտքը կատարվում է մուտքի դռան վերևի մասում նախատեսված ճաղաչարի միջոցով: Վառելիքի այրման գործընթացում առաջացած ծխագազերը հեռացվում են d=325մմ տրամագծով H=7մ բարձրությամբ ծխնելույզից:

Կաթսայատան շահագործումից հեղուկ և կոշտ կենցաղային թափոններ չեն առաջանում, քանի որ կաթսայատունն աշխատում է բնական գազով:

Կաթսայատան սրահում նախատեսված է ներածման և արտածման օդափոխություն բնական դրոմամբ: Արտածումը իրականացվում է U280 երկու դեֆլեկտորների միջոցով, իսկ օդի ներածումը՝ դռան վերևում տեղադրված 1200x400(h) ճաղաչարի միջոցով: Կաթսայատան գազամատակարարումը նախատեսված է ցածր ճնշման գազատարից՝ գազի ճնշման կարգավորիչ պահարանից հետո: Կաթսաները համարված են ավտոմատացված:

գազայրիչներով, որոնք աշխատում են ցածր ճնշման գազով: Գազի ծախսի հաշվարկման համար հաշվիչը տեղակայված է գազի ճնշման կարգավորիչ պահարանում:

Կաթսայատանը պետք է նախատեսվի CO-ի տվիչ (датчик), որից ազդանշան է գնում կաթսայատուն մտնող գազամուղի վրա տեղադրված էլեկտրոշարժաբերով սողնակին և այն փակում է գազի մուտքը կաթսայատուն (եթե CO-ի քանակը բարձր է նորմայից):

Նախատեսված է գազատարների փչամաքրման խողովակաշար:

Գազատարները մոնտաժվում են էլեկտրոեռակցումային և ջրագազամուղային պողպատյա խողովակներով: Գազատարների միացումները կատարվում են եռակցումով: Գազատարները մոնտաժումից հետո փորձարկվում են և ներկվում յուղաներկով: Գազատարների և սարքերի մոնտաժումը, փորձարկումը և հանձնումը շահագործման կատարվում է համաձայն գազային տնտեսության կանոնների պահանջների:

Դիլիջան քաղաքի ՀՀ կենտրոնական բանկի հանգստյան տան կաթսայատան իրականացումը շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն չի ունենա: Մթնոլորտում վնասակար նյութերի արտանետման հաշվարկների արդյունքում մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են սահմանային թույլատրելի նորմերում:

2013թ. նոյեմբերի 25-ին Դիլիջան քաղաքի բժշկական կենտրոնում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել է հասարակական քննարկում, որի ընթացքում հասարակայնությունը հավանություն է տվել ներկայացված նախագծին: Նախագծի վերաբերյալ ստացվել է մասնագիտական եզրակացություն՝ դրական:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի ՀՀ կենտրոնական բանկի հանգստյան տան կաթսայատան նախագծային փաստաթղթերի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Փոխանօրեն՝

Գրիգորյան

Փորձագետ՝

Ա. Դոնոյան



Գործունեությունը՝

Դիլիջան քաղաքի ՀՀ կենտրոնական բանկի հանգստյան տան կաթսայատան նախագծային փաստաթղթերի վերաբերյալ

Տեղումն՝

Գնորդյան

